ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 50

17 հուլիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 2-Ն որոշման հավելվածում լրացնել նոր 29.1-րդ կետ և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< **29.1 Բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կարգը.**

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ սույն օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ - 8	Դեմ՝- 0	Ձեռնպահ՝ - 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ	բացակա է		
ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՄԵՆ	✓		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ	բացակա է		
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ	✓		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ	✓		
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	✓		
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ	բացակա է		
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ	✓		
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ	✓		
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ	✓		
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ	բացակա է		
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ	բացակա է		
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ	բացակա է		
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ	բացակա է		
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ	✓		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հուլիսի 17
Քաղաք Մարալիկ